



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՆԻ  
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պտղնի համայնք  
ՀՀ Կոտայքի մարզ, գ. Պտղնի, 1-ին փող. 6  
(0222) 57070, ptghni.kotayq@mta.gov.am

**ՈՐՈՇՈՒՄ**

10 ԴԵԿԵMBERԻ 2018թվականի N 36

**ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի և 16-րդ հոդվածի պահանջների՝ **ավագանին որոշում է.**

**Հաստատել Պտղնի համայնքի ավագանու թիվ 10 հերթական նիստի հետևյալ օրակարգը՝**

1. Պտղնի համայնքի վարչական տարածքում 2019 թվականի համար տեղական տուրքերի և վճարների դրույթաչփերը սահմանելու մասին:
  2. Պտղնի համայնքի դեկավարի 2019 թվականի վարձատրության չափը որոշելու մասին:
  3. 2019 թվականի Պտղնիի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույթաչփերը հաստատելու մասին:
  4. Պտղնի համայնքի դեկավարի 2019 թվականի կամավոր լիազորությունների իրականացման կարգը հաստատելու մասին:
  5. «Հայաստանի համայնքների միություն» իրավաբանական Անձանց Միությանը անդամակցելու և անդամավճարի չափը սահմանելու մասին:
  6. Պտղնի համայնքի 2019 թվականի տարեկան աշխատանքային պլանը հաստատելու մասին:
  7. Պտղնի համայնքի 2019 թվականի բյուջեն հաստատելու մասին:
- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -5

Դեմ -0

Ձեռնպահ -0

1. ԱԶԻԶԲԵԿԱՆ ՎԻԿՏՈՐ *Հակոբ*

2. ԱՎԱԳԱՆ ԺԱՄԵՆ *Հայր*

3. ՄԻՍԱԿԱՆ ԵՐՋԱԼԻԿ *Էլլահ*

4. ՎԻՐԱԲՅԱՆ ՀԱԿՈԲ *Հայր*

5. ՏԱՐՅԱԿԱՆ ՍԱԹԵՆԻԿ *Հայր*

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝**



**ԱՊՆԵԼ ՎԻՐԱԲՅԱՆ**



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պտղնի համայնք  
ՀՀ Կոտայքի մարզ, գ. Պտղնի, 1-ին փող. 6  
(0222) 57070, ptghni.kotayq@mta.gov.am

### ՈՐՈՇՈՒՄ

10 ԴԵԿԵMBERԻ 2018թվականի N 37-Ն

#### ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ, 19-րդ կետերի, «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի և «Աղբահանության և սանհիտարական մաքրման մասին» օրենքի պահանջների՝ **ավագանին որոշում է.**

- Սահմանել Պտղնի համայնքի վարչական տարածքի 2019 թվականի տեղական տուրքերի և վճարների հետևյալ տեսակները և դրույքափերը համաձայն հավելվածի:
- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական իրապարակման օրվան հաջորդող օրվանից:

Կողմ -5

Դեմ -0

Ձեռնպահ -0

1. ԱԶԻԶԲԵԿԱՆ ՎԻԿՏՈՐ

2. ԱՎԱԳԱՆ ԺԱՍՄԵՆ

3. ՄԻՍԱԿԱՆ ԵՐԶԱՆԻԿ

4. ՎԻՐԱԲԵԿ ՀԱԿՈԲ

5. ՏԱՇՅԱՆ ՍՊԱԹՆԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ՝



ԱՌԱՋԵԼ ՎԻՐԱԲԵԿ

1. Պտղնի համայնքում սահմանել տեղական տուրքերի հետևյալ դրույքաչափերը.

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար.

ա. հիմնական շենքերի և շինությունների համար՝

մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ **տասնինգ հազար դրամ,**

բ. սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ երեսուն հազար դրամ,

- 500-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ հիսուն հազար դրամ,

- 1000-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ հիսուն հազար դրամ,

- 3000-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ հարյուր հազար դրամ.

գ. ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝

- մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ երեք հազար դրամ,

- 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների հինգ հազար դրամ.

դ. սույն կետի «ա» ենթակետով մակերես ունեցող շենքերի և շինությունների հինգ հազար դրամ.

2) համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա. չի նախատեսվում կցակառուցների, վերնակառուցների, շենքի գարարիտային չափերն ընդլայնող այլ կառուցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ **երեք հազար դրամ,**

բ. բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառուցների, վերնակառուցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառուցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, և, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափից, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հորվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով,

գ. նախատեսվում է միայն կցակառուցների, վերնակառուցների, շենքի գարարիտային չափերն ընդլայնող այլ կառուցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի հիմատով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հորվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը.

3) համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար՝ **հինգ հազար դրամ.**

4) համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ երկու հարյուր հազար դրամ.

5) համայնքի վարչական տարածքում գտնվող խանութերում և կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավային գազերի, մանրածախ առևտուր կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ձառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ վաթսուն հազար դրամ.

6) համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առը ու վաճառք իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ հիսուն հազար դրամ.

7) համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝

ա. ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինուայինների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ հինգ հազար դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինուայինների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասնմեկ հազար դրամ,

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինուայինների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քսանմեկ հազար դրամ,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինուայինների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քսանմեկ հազար դրամ,

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինուայինների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ հինգ հազար դրամ,

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինուայինների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ հիսուն հազար դրամ.

բ. ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինուայինների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ հինգ հազար դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինուայինների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասնմեկ հազար դրամ,

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինուայինների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ հինգ հազար դրամ,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինուայինների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քսանմեկ հազար դրամ,

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինուայինների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ հիսուն հազար դրամ,

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինուայինների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ հիսուն հազար դրամ.

8) իրավաբանական անձանց և անհատ ծեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում «Ալևտիի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ բացօթյա առևտուրի կազմակերպման թույլտվության համար՝ յուրաքանչյուր օրվա համար՝ երեք հարյուր հիսուն դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.

9) համայնքի վարչական տարածքում առևտուրի, հանրային սննդի, զվարճանքի, շահուառվ խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սառնաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

ա. առևտուրի օբյեկտների համար՝ երեսունհինգ հազար դրամ,

բ. հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ հիսուն հազար դրամ,

գ. բաղնիքների (սառնաների) համար՝ երկու հարյուր հազար դրամ,

դ. խաղատների համար՝ հինգ հարյուր հազար դրամ,

ե. շահուառվ խաղերի համար՝ երկու հարյուր հիսուն հազար դրամ,

զ. վիճակախաղերի համար՝ հարյուր հազար դրամ.

**10)** համայնքի վարչական տարածքում, համայնքային կանոններին համապատասխան, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

**ա.** հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ հինգ հազար դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ ութ հազար դրամ,

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ տասներկու հազար դրամ,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ տասնվեց հազար դրամ,

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ քասնինգ հազար դրամ,

բ. ոչ հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ մեկ հազար դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ մեկ հազար հինգ հարյուր դրամ,

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ երկու հազար հինգ հարյուր դրամ,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ չորս հազար հինգ հարյուր դրամ,

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ ութ հազար հինգ հարյուր դրամ,

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ տասներկու հինգ հարյուր դրամ.

**11)** ավագանու սահմանաձ կարգին ու պայմաններին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, քացառությամբ միջաեւտական ու հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտերում և պաշտպանական գոտիներում տեղադրվող գովազդների թույլտվությունների, յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝

**ա.** ավկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ երկու հազար դրամ,

**բ.** թունդ ավկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ երեք հազար հինգ հարյուր դրամ,

**գ.** սոցիալական գովազդի համար՝ զրո դրամ,

**դ.** այլ արտաքին գովազդի համար՝ հազար հինգ հարյուր դրամ,

**ե.** դատարկ գովազդային վահանակների համար՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25 %-ի չափով,

**զ.** եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10 %-ի չափով.

**12)** Հայաստանի Հանրապետության համայնքների խորհրդանիշները (գինանշան, անվանում և այլն), որպես օրենքով գրանցված ապրանքային նշան, ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործներացներում օգտագործելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ հարյուր հազար դրամ.

**13)** համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու (քացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտորուաների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝ տասը հազար դրամ.

**14)** համայնքի վարչական տարածքում բաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծխակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ հինգ հարյուր հազար դրամ.

15) համայնքի վարչական տարածքում մասնավոր գերեզմանատան կազմակերպման և շահագործման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

ա. 3 հա-ից մինչև 5 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ երկու միլիոն հինգ հարյուր հազար դրամ,

բ. 5 հա-ից մինչև 7 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ հինգ միլիոն դրամ,

գ. 7 հա-ից մինչև 10 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ յոթ միլիոն դրամ,

դ. 10 հա-ից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար՝ տասը միլիոն դրամ:

16) համայնքի վարչական տարածքում տեխնիկական և հատուկ նշանակության հրավառություն հրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ մեկ հարյուր հազար դրամ:

**2. Պտղնի համայնքում սահմանել տեղական վճարների հետևյալ դրույքաչափերը.**

1) համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար. տասն հազար դրամ,

2) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո շենքերի և շինությունների (այդ թվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդարձակումն ու բարեկարգումը) կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար. տասն հազար դրամ,

3) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար. տասն հազար դրամ,

4) համայնքի տնօրինության և օգտագործման ներքո գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար. քսան հազար դրամ,

5) համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և անորդների մասնակցության համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար. հինգ հազար դրամ,

6) համայնքի կողմից աղքահանության վճար վճարողների համար աղքահանության աշխատանքները կազմակերպելու համար աղքահանության վճարը սահմանել՝

ա. կենցաղային աղբի համար՝

- ըստ հաշվառված անձանց քանակի՝ համայնքում անձնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեի հաշվառում ունեցող և (կամ) բնակվող յուրաքանչյուր բնակչի համար ամսական՝ մեկ հարյուր հիսուն դրամ,

բ. ոչ՝ կենցաղային և խոշոր եզրաչափի աղբի համար՝

- ըստ ծավալի՝ մեկ խորանարդ մետր աղբի համար՝ մեկ հազար դրամ

- ըստ զանգվածի՝ մեկ տոննա աղբի համար՝ երեք հազար դրամ

7) համայնքի կողմից իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերին շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման, ինչպես նաև աղքահանության վճար վճարողներին շինարարական և խոշոր եզրաչափի աղբի ինքնուրույն հավաքման և փոխադրման թույլտվության համար աղքահանության վճարը սահմանել մեկ խորանարդ մետրի համար՝ մեկ հազար դրամ:

8) համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար՝ մեկ փաստաթղթի համար՝ մեկ հազար դրամ:

9) համայնքն սպասարկող անասնաբույժի ծառայությունների դիմաց տեղական վճարի դրույքաչափ՝ մեկ հազար դրամ:





## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պտղնի համայնք  
ՀՀ Կոտայքի մարզ, գ. Պտղնի, 1-ին փող. 6  
(0222) 57070, ptghni.kotayq@mta.gov.am

### ՈՐՈՇՈՒՄ

10 ԴԵԿԵMBERԻ 2018թվականի N 38

#### ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ԶԱՓԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի պահանջների՝ **ավագանին որոշում է.**

- Պտղնի համայնքի դեկավարի 2019 թվականի վարձատրության չափը որոշել ամսական 300 000 (երեք հարյուր հազար) ՀՀ դրամ:
- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2019 թվականի հունվարի 1-ից:

Կողմ -5

Դեմ -0

Ձեռնպահ -0

- ԱԶԻԳԲԵԿԱՆ ՎԻԿՏՈՐ *Վահ*
- ԱՎԱԳԱՆ ԺԱՍՄԵՆ *Տեղի*
- ՄԻՍԱԿՅԱՆ ԵՐՋԱՆԻԿ *Է. Միսիկ*
- ՎԻՐԱԲԵՅ ՀԱԿՈԲ *Հակոբ*
- ՏԱՇՅԱՆ ՍԱԹԵՆԻԿ *Տաշյան*

ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ՝



ԱՌԱԲԵԼ ՎԻՐԱԲԵՅ



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պտղնի համայնք  
ՀՀ Կոտայքի մարզ, գ. Պտղնի, 1-ին փող. 6  
(0222) 57070, ptghni.kotayq@mta.gov.am

### ՈՐՈՇՈՒՄ

10 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 39

#### 2019 թվականի ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՅՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՀԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի՝ պահանջների՝ **ավագանին որոշում է.**

- Հաստատել 2019 թվականի Պտղնի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքափերը՝ համաձայն հավելվածի:
- Սույն որոշումն ուժի մեջ են մտնում 2019 թվականի հունվարի 01-ից:

Կողմ -5

Դեմ -0

Ձեռնպահ -0

1. ԱԶԻԶԲԵԿՅԱՆ ՎԻԿՏՈՐ

2. ԱՎԱԳԱՆ ԺԱՍՄԻՆ

3. ՄԻՍԱԿՅԱՆ ԵՐԱՋԻԿ

4. ՎԻՐԱԲՅԱՆ ՀԱԿՈԲ

5. ՏԱՇՅԱՅ ՍԱԹԵՆԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ՝



ԱՆԱԲԵԼ ՎԻՐԱԲՅԱՆ

**ՀԱՍՏՆՔԱՑՈՒՅԹԱԿ**  
**Պաղնի համայնքակետարանի աշխատակազմի**

ՀԱՎԵԼՎԱԾ  
 Պաղնի համայնքակետարանի ավագանու 2018  
 թվականի դնդանելինի 10-ի N 39

Հ/Հ	Կազմովերսության և անհնագույն	Հաստիքի անկատմն	Հաստիքի տեսակը	Պաշտոնի ճամփանոց	հաստիքային միավոր	Պաշտոնային ուսումնական	Հավելամբ	Աշխատավարձ առողջական
1	1	Համայնքի դեկանար	4	5	6	7	9	10
1	2	Համայնքի դեկանար	-	1	300000	-	-	300000
2	2	Համայնքի դեկանարի տեղական	-	1	143000	-	-	143000
3	3	Համայնքի դեկանարի խորհություն	-	1	135000	-	-	135000
4	4	Աշխատակազմի քարտուղար	1.2-1	1	220000	-	11000	231000
5	5	Առաջատար մասնագետ	3.1-1	1	152000	-	7600	159600
6	6	Առաջատար մասնագետ ի աշխատակետարանի աշխատակետարան	3.1-2	1	152000	-	7600	159600
7	7	Համայնքային ժողովագույն	3.2-1	1	97000	-	4850	101850
8	8	Համայնքային ժողովագույն	3.2-2	1	97000	-	4850	101850
9	9	2-րդ կարգի մասնագետ	3.3-1	1	74000	-	-	74000
10	10	Վարորդ	Տեխնիկական առողջապահություն	-	1	74000	-	74000
11	11	Հավաքաքարտ	Տեխնիկական առաջարկագույն	-	1	74000	-	74000
12	12	Կոմունակ սպասարկիչնան ըսնող	-	12	1592000	-	35900	1627900
		Ընդամենը						

Պաղնի համայնքի ղեկավար՝

Ա. Վիրաբյան



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պտղնի համայնք  
ՀՀ Կոտայքի մարզ, գ. Պտղնի, 1-ին փող. 6  
(0222) 57070, ptghni.kotayq@mta.gov.am

### ՈՐՈՇՈՒՄ

10 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 40

#### ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԿԱՄԱՎՈՐ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի պահանջների՝ **ավագանին որոշում է.**

- Հաստատել Պտղնի համայնքի դեկավարի 2018 թվականի կամավոր լիազորությունների իրականացման կարգը, համաձայն հավելվածի:
- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2019 թվականի հունվարի 01-ից:

Կողմ -5

Դեմ -0

Ձեռնպահ -0

1. Աշխարհեալ ՎԻԿՏՈՐ *Հերմ*

2. ԱՎԱԳԱՆ ԺԱՄԵՆ *Հերմ*

3. ՄԻՍԱԿԱՆ ԵՐՋԱՄՆԻԿ *Է. Ջինի*

4. ՎԻՐԱԲՅԱՆ ՀԱԿՈԲ *Հ. Ջինի*

5. ՏԱՋՅԱՆ ՍԱԹԵՆԻԿ *Վ. Ջինի*

ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ՝



ԱԽԱՐԵԼ ՎԻՐԱԲՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ

Պտղնի համայնքի ավագանու

2018 թվականի դեկտեմբերի 10-ի N 40 որոշման

**ԿԱՐԳ**

**ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ**

**ԿԱՄԱՎՈՐ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ**

1. Սույն կարգով սահմանվում է Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պտղնի համայնքի ղեկավարի՝ (այսուհետ՝ համայնքի ղեկավար) կամավոր լիազորությունների (այսուհետ՝ լիազորություններ) իրականացման կարգը:
2. Լիազորությունների իրականացման կարգը սահմանվում է «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի համաձայն:
3. Կամավար լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ ֆինանսավաճ ֆինանսավորմանը տրամադրվում են տվյալ տարվա համայնքի բյուջեով նախատեսված ֆինանսավորմանը համապատասխան:
4. Համայնքի ղեկավարը կամավոր լիազորություններ իրականացնում է հետևյալ բնագավառներում՝ **պաշտպանության կազմակերպման բնագավառ**
  - 1) Քաղաքացիական պաշտպանության մարմինների գործունեության համար – 100 000 << դրամ:
  - 2) Հինձնառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, պատերազմի վետերանների և զոհված ազատամարտիկների ընտանիքների սոցիալական խնդիրների լուծման համար տրամադրել դրամական օգնություն 50 000-ական դրամ:

**Կրթության, մշակույթի և երիտասարդության հետ տարվող աշխատանքների բնագավառ**

- 1) Պտղնիի միջնակարգ դպրոցին տրամադրել դրամաշնորհ – 950 000 << դրամ:
- 2) Հայոց բանակի օրվա կապակցությամբ նվերներ և միջոցառման կազմակերպում – 150000 << դրամ:
- 3) Կանանց միամյակի համար նվերներ և միջոցառման կազմակերպում – 300000 << դրամ:
- 4) Սեպտեմբերի 1-ի և վերջին զանգի կապակցությամբ – 500000 << դրամ:
- 5) Ամանորյա նվերներ և միջոցառման կազմակերպում – 500000 << դրամ:

**առողջապահության, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառ**

- 1) Համայնքի բուժկետին տրամադրել դրամաշնորհ – 500 000 << դրամ:

**աշխատանքի և սոցիալական ծառայության բնագավառ**

- 1) Համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցներին արձակուրդի տրամադրման հետ մեկտեղ վճարել բուժման գումար մեկ ամսվա աշխատավարձի չափով:
- 2) Հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման համար յուրաքանչյուր դիմող բնակչին տրամադրել 50 000 << դրամ:
- 3) Յուրաքանչյուր ընտանիքում նոր ծնված երեխայի համար միանվագ տրամադրել 30 000 << դրամ:
- 4) Թաղման ծախսերի փոխհատուցման համար տրամադրել միանվագ գումար 70 000-ական դրամ:

**օրենսդիր և գործադիր մարմինների պահպանման բնագավառ**

- 1) Համայնքի ղեկավարի բջջային հեռախոսի վարձավճար 2 հեռախոսահամարների համար՝ ամսեկան 15000 << դրամ:
- 2) Համայնքի ղեկավարին ամրակցված NISSAN ALTIMA ծառայողական մեքենայի համար՝ օրեկան 6 լիտր բենզին:
- 3) Համայնքի ղեկավարի տեղակալին ամրակցված AUDI A6 ծառայողական մեքենայի համար՝ օրեկան 1 լիտր բենզին և ամսեկան 100 խմ սեղմված գազ:
- 4) Աշխատակազմի քարտուղարին ամրակցված VAZ 21063 ծառայողական մեքենայի համար՝ օրեկան 1 լիտր բենզին և ամսեկան 150 խմ սեղմված գազ:
5. Համայնքի ղեկավարը կամավոր լիազորություններն իրականացնում է համայնքապետարանի աշխատակազմի միջոցով:



Պտղնի համայնքի ղեկավար՝

Ա. Վիրաբյան



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պտղնի համայնք  
ՀՀ Կոտայքի մարզ, գ. Պտղնի, 1-ին փող. 6  
(0222) 57070, ptghni.kotayq@mta.gov.am

### ՈՐՈՇՈՒՄ

10 ԴԵԿԵMBERԻ 2018թվականի N 41

#### «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ» ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՑ ՄԻՈՒԹՅԱՆԸ ԱՆԴԱՄԱԿՑԵԼՈՒ ԵՎ ԱՆԴԱՄԱՎՃԱՐԻ ԶԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջների՝ **ավագանին որոշում է.**

- Անդամակցել «Հայաստանի համայնքների միուլյուն» իրավաբանական անձանց միուլյանը;
- Տարեկան անդամավճարի չափը սահմանել համայնքում հաշվառված յուրաքանչյուր բնակչի հաշվով 10 ՀՀ դրամ:
- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ -5

Դեմ -0

Զեռնպահ -0

1. ԱԶԻՋԲԵԿՅԱՆ ՎԻԿՏՈՐ

2. ԱՎԱԳՅԱՆ ԺԱՄԻԼ

3. ՄԻՍԱԿՅԱՆ ԵՐԱՋԱՆԻԿ

4. ՎԻՐԱԲՅԱՆ ՀԱԿՈԲ

5. ՏԱՇՐԱՅ ՍԱԹԵՆԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ՝



ԱՌԱՋԵԼ ՎԻՐԱԲՅԱՆ



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պտղնի համայնք  
ՀՀ Կոտայքի մարզ, գ. Պտղնի, 1-ին փող. 6  
(0222) 57070, ptghni.kotayq@mta.gov.am

### ՈՐՈՇՈՒՄ

10 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 42

#### ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 13-րդ հոդվածի 10-րդ մասի պահանջների՝ **ավագանին որոշում է.**

- Հաստատել Պտղնի համայնքի 2019 թվականի տարեկան աշխատանքային պլանը համաձայն հավելվածի:
- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ -5

Դեմ -0

Ձեռնպահ -0

1. ԱԶԻԶԲԵԿԱՆ ՎԻԿՏՈՐ

2. ԱՎԱԳԱՆ ԺԱՄՄԵՆ

3. ՄԻՍԱԿԱՆ ԵՐՋԱԼԻԿ

4. ՎԻՐԱԲԵՐԱՆ ՀԱԿՈՐ

5. ՏԱԶՅԱՆ ՍԱԹԵՆԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱԿԱՐ՝



ԱՌԱԲԵԼ ՎԻՐԱԲԵՐԱՆ

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ

ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔ

Համայնքի 2019 թվականի



## ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ



Կազմել է՝ համայնքի ղեկավար Ա. Վիրաբյանը

Հաստատվել է՝ համայնքի ավագանու 2018թ.-ի դեկտեմբերի 10-ի թիվ 42  
որոշմամբ

Պտղնի 2018թ.

## **Բովանդակություն**

<u>ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ</u>	4
2. <u>ՀԱՄԱՅՆՔԻ 2019 թ. ԾՐԱԳՐԵՐԻ ՑԱՆԿԸ և ՏՐԱՄԱԲԱՆԱԿԱՆ ՀԵՂՔԵՐԸ (ԸՆՏ ՈԼՈՐՏՆԵՐԻ)</u>	7
3. <u>ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ 2019 թ. ԾՐԱԳԻՐԸ</u>	13
4. <u>ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՊ-Ի ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՊԼԱՆԸ</u>	13
5. <u>ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՊ-Ի ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ և ԳՆԱՀԱՏՄԱՆ ՊԼԱՆԸ</u>	15

## Ներածություն

Պտղնի համայնքի 2019թ. տարեկան աշխատանքային պլանը (ՏԱՊ-ը) նպատակ ունի արդյունավետ պլանավորման միջոցով բարելավել համայնքում կայացվող որոշումների որակը: Հիմք ունենալով համայնքի հնգամյա զարգացման ծրագրով, ՏԱՊ-ը ուղղված է հստակեցնելու տարեկան կտրվածքով համայնքի զարգացման ուղղված ծրագրերը և միջոցառումները, դրանց իրականացման համար ներդրվող ռեսուրսներն ու ժամկետները: Որպես համայնքի տարեկան ծրագրային փաստաթուղթ, այն նպատակ ունի ներգրավել համայնքի ներքին և արտաքին ներդրողների հնարավորությունները՝ համայնքային խնդիրներն առավել արդյունավետ լուծելու գործում:

Պտղնի համայնքի տարեկան աշխատանքային պլանը կազմվել է Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության աջակցությամբ և «Համայնքների ֆինանսիստների միավորում» հասարակական կազմակերպություն կողմից մշակված «Համայնքի ՏԱՊ-ի մշակման մեթոդական ուղեցույց»-ի հիման վրա:

Պտղնի համայնքի 2019 թվականի ՏԱՊ-ը բաղկացած է 5 հիմնական բաժիններից, որոնք կառուցված են ծրագրերի նպատակներից արդյունքներին հասնելու տրամաբանական հենքի վրա:

Համայնքի տեսլականը և ոլորտային նպատակները սահմանում են 2019 թվականին Պտղնի համայնքում ՏԻՄ-ի լիազորությունների շրջանակներում սահմանված նպատակները, զարգացման հիմնական ուղղությունները և խթանները:

2019թ. նախատեսված ծրագրերի ցանկը և տրամաբանական հենքերը ներկայացված են ըստ բնակավայրերի ու դրանց արժեքների:

ՏԱՊ-ում ներկայացվում է նաև համայնքային սեփականություն հանդիսացող գույքի կառավարման տարեկան ծրագրիրը՝ պլանավորված գործնթացները և գործողությունները:

ՏԱՊ-ում նախատեսված ծրագրերի ֆինանսավորման պլանը սահմանում է ֆինանսավորման այն աղյուրները, որոնք պետք է ապահովեն դրանց իրականացումը:

ՏԱՊ-ի իրականացման արդյունավետությունը նախատեսվում է իրագործել ըստ մոնիթորինգի և գնահատման պլանի՝ կիսամյակային կամ տարեկան կտրվածքով:

## 1. Համայնքի տեսլականը և ոլորտային նպատակները Համայնքի տեսլականը՝

Պտղնի համայնքը բարեկեցիկ, զարգացած ենթակառուցվածքներով տնտեսապես բարվոր համայնք է, որտեղ բնակիչները ապահովված են աշխատանքով, իսկ համայնքային ենթակառուցվածքները ապահովված են անհրաժեշտ միջոցներով և մատուցում են բավարար ծառայություններ:

### Այլուսակ 1. Համայնքի կայուն զարգացման ցուցանիշները

Ցուցանիշ	Ելակետային արժեք	Թիրախային արժեք
Արքայության շեմից ցածր գտնվող ընտանիքների թվի տեսակարար կշիռը համայնքի ընտանիքների ընդհանուր թվի մեջ (%)	10.0%	8.0%
Համայնքի բյուջեի սեփական եկամուտների տեսակարար կշիռն ընդհանուր եկամուտների մեջ (%)	10%	18%
Համայնքում հաշվառված բնակիչների ընդհանուր թիվը (մարդ)	1634	1660
Համայնքում տվյալ տարվա ընթացքում արտաքրուցետային ներդրումների ծավալը (հազ. դրամ)	0	0
Համայնքում գործող ՓՄՁ-ների քանակը և դրանցում աշխատատեղերի թիվը (հատ)	10/84	15/120
Այլ ցուցանիշ	0	0

### Այլուսակ 2. Համայնքի ոլորտային նպատակները

Ոլորտային նպատակ	Վերջնական արդյունք՝		
	Ցուցանիշ	Ելակետային արժեք	Թիրախային արժեք
<b>Ոլորտ 1. Ընդհանուր</b> Ապահովել տեղական ինքնակառավարումը Պտղնի համայնքում և բնակչությանը համայնքային ծառայությունների մատուցումը:	Համայնքի բնակիչների բավարարվածությունը (հարցումների հիման վրա) ՏԻՄ-ի և համայնքապետարանի աշխատակազմի գործունեությունից, մատուցված համայնքային ծառայություններից	լավ	ավելի լավ
<b>Ոլորտ 2. Պաշտպանության կազմակերպում</b> Նպաստել երկրի պաշտպանունակության մակարդակի բարձրացմանը:	Համայնքում բնակվող զինապարտ քաղաքացիների գրանցամատյանի վարումը, այդ/ոչ	այո	այո
	Զորակոչիկների բավարարվածությունը մատուցված ծառայություններից (հարցումների հիման վրա), %	80	100

<b>Ոլորտ 3.Արտակարգ իրավիճակներից բնակչության պաշտպանություն և քաղաքացիական պաշտպանության կազմակերպում</b>			
Բարելավել համայնքի բնակչության քաղաքացիական պաշտպանության կազմակերպման ուժերի պատրաստվածության մակարդակը և իրականացնել արտակարգ իրավիճակների կանխարգելման միջոցառումներ:	Արտակարգ իրավիճակների ժամանակ համայնքի բնակչության քաղաքացիական պաշտպանության կազմակերպման ուժերի պատրաստվածության մակարդակը	բավարար	լավ
<b>Ոլորտ 4. Քաղաքաշինություն և կոմունալ տնտեսություն</b>			
Ապահովել համայնքի նոր քաղամասի փողոցային լուսավորությունը	Բնակչների բավարարվածությունը համայնքում գիշերային լուսավորվածությունից (հարցումների հիման վրա)	բավարար	լավ
<b>Ոլորտ 5. Տրանսպորտ</b>			
Բարելավել ներհամայնքային ճանապարհների անցանելիության մակարդակը:	Ընթացիկ նորոգված ներհամայնքային ճանապարհների երկարությունը, քմ	10000	15000
	Համայնքային ենթակայության ճանապարհների սպասարկման, շահագործման և պահպանման ծառայությունների որակից բնակչության բավարարվածության աստիճանը (հարցումների հիման վրա)	բավարար	լավ
<b>Ոլորտ 6. Առևտուր և ծառայություններ</b>			
2018 թվականի ընթացքում խթանել համայնքում գործարար միջավայրի և անհատ ձեռնարկատիրական գործունեությամբ գրավողների բարելավումն ու զարգացումը	Համայնքում գործող անհատ ձեռներեցների թիվը	7	10
<b>Ոլորտ 7. Կրթություն</b>			
Ապահովել համայնքի բնակչությանը նախակրթական և արտադպրոցական կրթության որակյալ ծառայությունների մատուցումը և ընդլայնումը	ՏԻՄ-երի, կրթական հաստատությունների գործունեությունից, մատուցված ծառայությունների որակից և մատչելիությունից	լավ	լավ

	բնակչության բավարարվածության աստիճանը (հարցումների հիման վրա) – լավ		
<b>Ոլորտ 8. Մշակույթ և երիտասարդության հետ տարվող աշխատանքներ</b>			
Ապահովել համայնքում տոն և հիշատակի օրերին նվիրված միջոցառումների հավոր պատշաճի կազմակերպումը և անցկացումը	Տարվա ընթացքում կազմակերպված միջոցառումների թիվը՝ նվիրված տոնական և հիշատակի օրերին	9	11
<b>Ոլորտ 9. Առողջապահություն</b>			
2019 թվականի ընթացքում ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում, այդ պատճառով ոլորտային նպատակ չի սահմանվել:	-	-	-
<b>Ոլորտ 10. Ֆիզիկական կուլտուրա և սպորտ</b>			
Նպաստել համայնքում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացմանը:	Մատուցված մարզական ծառայությունների մասին բնակիչների կարծիքը	վատ	նորմալ
<b>Ոլորտ 11. Սոցիալական պաշտպանություն</b>			
Բարելավել սոցիալապես անապահով ընտանիքների սոցիալական վիճակը:	Սոցիալական ծրագրի առկայությունը, այո/ոչ	այո	այո
<b>Ոլորտ 12. Շրջակա միջավայրի պահպանություն</b>			
Ապահովել համայնքի բոլոր բնակավայրերում բնակչությանը աղբահանության և սանիտարական մաքրման ծառայությունների մատուցումը և շրջակա միջավայրի մաքրությունը:	Համայնքի բնակիչների բավարարվածությունը մատուցված աղբահանության և սանիտարական մաքրման ծառայություններից (հարցումների հիման վրա)	բավարար	լավ
<b>Ոլորտ 13. Տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցություն</b>			
Ապահովել ՏԻՄ գործունեության մասին տեղեկատվության հասանելիությունը համայնքի բնակիչներին, ներգրավել նրանց համայնքային որոշումների կայացման գործում	Համայնքի բնակիչների մասնակցությամբ ՏԻՄ- երի (համայնքի ղեկավարի, համայնքի ավագանու) կողմից կայացված որոշումների թվի տեսակարար կշիռը կայացված որոշումների ընդհանուր թվի մեջ, %	5	6

2. Համայնքի 2019 թ. ծրագրերի ցանկը և տրամաբանական հենքերը (ըստ ոլորտների)  
Այլուսակ 3.ՏՏՊ-ի ծրագրերը, որոնք ապահովված են համապատասխան ֆինանսական  
միջոցներով

Հ/հ	Ծրագրի անվանումը	Ծրագրի արժեքը (հազ. դրամ)	Համայնքի բնակչայրը
<b>Ոլորտ 1. Ընդհանուր</b>			
1.	Ընդհանուր բնույթի համայնքային ծառայությունների մատուցում	30305.0	համայնք
<b>Ընդամենը</b>		30305.0	-
<b>Ոլորտ 2. Պաշտպանության կազմակերպում</b>			
1.	2019 թվականին պաշտպանության կազմակերպման ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում	-	-
<b>Ընդամենը</b>		-	
<b>Ոլորտ 3. Արտակարգ իրավիճակներից բնակչության պաշտպանություն և քաղաքացիական պաշտպանության կազմակերպում</b>			
1.	2018 թվականին արտակարգ իրավիճակներից բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության կազմակերպման ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում	-	-
<b>Ընդամենը</b>		-	
<b>Ոլորտ 4. Քաղաքաշինություն և կոմունալ տնտեսություն</b>			
1.	Փողոցների լուսավորում	1200.0	համայնք
2.	Ջրամատակարարում	400.0	համայնք
3.	Ներհամայնքային ճանապարհների վերանորոգում և պահպանում	-	համայնք
4.	Համայնքում գիշերային լուսավորության ցանցի ընդլայնում	-	-
<b>Ընդամենը</b>		1600.0	
<b>Ոլորտ 5. Հողօգտագործում</b>			
	2018 թվականին հողօգտագործման ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում	-	-
<b>Ընդամենը</b>		-	
<b>Ոլորտ 6. Տրանսպորտ</b>			
1.	Ներհամայնքային ճանապարհների փոսայցում	3400.0	համայնք
<b>Ընդամենը</b>		3400.0	
<b>Ոլորտ 7. Առևտուր և ծառայություններ</b>			
	2018 թվականին առևտուր և ծառայությունների ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում	-	-
<b>Ընդամենը</b>		-	
<b>Ոլորտ 8. Կրթություն</b>			
1.	Ընթացիկ դրամաշնորհ դպրոցին նախադպրոցական կրթություն	950.0	համայնք
<b>Ընդամենը</b>		950.0	-
<b>Ոլորտ 9. Մշակույթ և երիտասարդության հետ տարվող աշխատանքներ</b>			
1.	Մշակութային և հոգևոր կյանքի աշխուժացում	1150.0	Ընդհանուր համայնքային
<b>Ընդամենը</b>		1150.0	-

<b>Ոլորտ 10. Առողջապահություն</b>			
	Ընթացիկ դրամաշնորհ բուժ. կետին	300.0	համայնք
<b>Ընդամենը</b>		300.0	-
<b>Ոլորտ 11. Ֆիզիկական կուլտուրա և սպորտ</b>			
2018 թվականին առողջապահության ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում		-	-
<b>Ընդամենը</b>		-	-
<b>Ոլորտ 12. Սոցիալական պաշտպանություն</b>			
1.	Հոգարկավորության նպաստներ բյուջեից	1260.0	համայնք
2.	Աջակցություն համայնքի սոցիալապես անապահով բնակիչներին	940.0	համայնք
<b>Ընդամենը</b>		2200.0	-
<b>Ոլորտ 13. Գյուղատնտեսություն</b>			
1.	Անասնաբուժական ծառ.	480.0	համայնք
	<b>Ընդամենը</b>	480.0	

<b>Ոլորտ 14. Անասնաբուժություն և բուսասանիտարիա</b>			
1.	2018 թվականին անասնաբուժության և բուսասանիտարիայի ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում	-	-
<b>Ընդամենը</b>		-	-
<b>Ոլորտ 15. Շրջակա միջավայրի պահպանություն</b>			
1.	Բնապահպանության վճար	48.0	-
2.	Աղքահանություն	1780.0	
<b>Ընդամենը</b>		1828.0	-
<b>Ոլորտ 16. Ջրոսաշրջություն</b>			
1.	2018 թվականին ջրոսաշրջության ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում:	-	-
<b>Ընդամենը</b>		-	-
<b>Ոլորտ 17. Տեղական ինքնակառավարմանը բնակչության մասնակցություն</b>			
1.	2018 թվականին տեղական ինքնակառավարմանը բնակչության մասնակցության ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում:	-	-
<b>Ընդամենը</b>		-	-
<b>Ընդհանուրը</b>		41913.3	-

**Այլուսակ 4. ՏԱՊ-ի ծրագրերը, որոնք ապահովված չեն համապատասխան ֆինանսական միջոցներով**

C/h	Ծրագրի անվանումը	Ծրագրի արժեքը (հազ. դրամ)	ԲԲՀ-ի բնակավայրը
<b>Ոլորտ 1.Քաղաքաշինություն և կոմունալ տնտեսություն</b>			
1.	Նոր թաղամասի փողոցային լրսավորության անցկացում	3000.0	
	<b>Ընդամենը</b>	3000.0	
	<b>Ընդհանուրը</b>	3000.0	

**Աղյուսակ 5. ՏԱՊ-ով նախատեսված ծրագրերի տրամաբանական հենքերը՝ ըստ համայնքի ռեկավարի լիազորությունների ոլորտների**

Ամփոփ նկարագիր	Արդյունքային ցուցանիշներ	Տեղեկատվության աղբյուրներ	Պատասխանատու	Ժամկետ	Ռիսկեր	
<b>Ոլորտ 1. Ընդհանուր</b>						
Ոլորտային նպատակ Ապահովել համայնքի արդյունավետ կառավարումը և բնակչությանը հանրային որակյալ և մատչելի ծառայությունների մատուցում		Ոլորտի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշ. 1. Համայնքի բնակչության քավարարվածությունը (հարցումների հիման վրա) ՏԻՄ-երի, աշխատակազմի գործունեությունից, մատուցված համայնքային ծառայություններից - լավ 2. Համայնքի բյուջեի սեփական եկամուտների տեսակարար կշիռը համայնքի բյուջեի ընդհանուր մուտքերի կազմում՝ 50 %				
Միջոցառումներ (գործողություններ). 1. Աշխատակազմի պահպանություն 2. Համայնքի հողի հարկի և գույքահարկի գանձման ավտոմատացված համակարգերի սպասարկում		<b>Մուտքային ցուցանիշներ (ներդրված ռեսուրսներ)</b> 1. Համայնքապետարանի աշխատակազմի պահպանման ծախսեր՝ 30305.3 հազ.դրամ 2. Համայնքապետարանի աշխատակազմի աշխատողներ՝ 11 3. Համայնքի հողի հարկի և գույքահարկի ավտոմատացված համակարգեր՝ 1 ֆինանսավորման աղբյուրը՝ համայնքի բյուջեի միջոցներ				
<b>Ոլորտ 2. Պաշտպանության կազմակերպում</b>						
Ոլորտային նպատակ Նպաստել երկրի պաշտպանունակության մակարդակի բարձրացմանը:		Ոլորտի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշ 1. Համայնքում բնակվող գինապարտ քաղաքացիների գրանցամատյանի վարումը - այն 2. Զորակոչիկների քավարավածությունը մատուցված ծառայություններից (հարցումների հիման վրա) - 100 %				
Միջոցառումներ (գործողություններ). Զորակոչի կազմակերպման բարելավում		Աշխատակազմի գորակոչի հարցերով գրավվող աշխատակիցների թիվը - 2				
<b>Ոլորտ 3. Արտակարգ իրավիճակներից բնակչության պաշտպանություն և քաղաքացիական պաշտպանության կազմակերպում</b>						
Ոլորտային նպատակ Բարելավել համայնքի բնակչության քաղաքացիկան պաշտպանության կազմակրպման ուժերի պատրաստվածության մակարդակը		Բնակչության իրազեկման մակարդակը բավականին լավ	Կիսամյակային և տարեկան հաշվետվություններ	Համայնքի ղեկավար	2019թ հունվար դեկտեմբեր	Համապատասխան ֆինանսական ռեսուրսներ
<b>Ոլորտ 4 Քաղաքաշինություն և կոմունալ տնտեսություն</b>						

<b>Ոլորտային նպատակ</b> Ապահովել համայնքի բնակչության կենսամակարդակի բարելավումը	Համայնքի բնակչության կենսամակարդակի բարելավումը	Կիսամյակային և տարեկան հաշվետվությունն եր	Համայնքի ղեկավար	2019թ հունվար դեկտեմ բեր	Համապ ատախ ան ֆինան սական ռեսուսն եր
<b>Միջոցառումներ</b> Համայնքի փողոցների լուսավորման և պոմպակայանի էլ. էներգիայի վարձավճար		Մուտքային ցուցանիշներ / ներդրված ռեսուսներ/ Համայնքի տարեկան բյուջեով նախատեսված ծախսեր՝ 1600,0 << դրամ			
<b>Ոլորտ 5. Տրանսպորտ Ներհամայնքային ճանապարհների փոսացում</b>					
<b>Ծրագրի նպատակ</b> Ունենալ բարեկարգ, անվտանգ և մաքուր փողոցներ	Համայնքի փողոցների բարեկարգ ճանապարհներ	Կիսամյակային և տարեկան հաշվետվությունն եր	Համայնքի ղեկավար	2019թ հունվար դեկտեմ բեր	Համապ ատախ ան ֆինան սական ռեսուսն եր
